ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՀՐԱՉ ԵՎ ՍՅՈՒՋԱՆ ԹՈՒՖԱՅԱՆՆԵՐԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՀՐԱՉ ԵՒ ՍԻՒՋԱՆ ԹՈՒՖԱՅԵԱՆՆԵՐ, ՈՐ Ի ՆԻՒ ՋԵՐՍԻ, ԱՄՆ

Հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնն ու օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ մեր ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակներիդ:

Տիրոջ կամքով առիթ ունեցանք ճանաչելու հաւատաւոր հայորդիներիդ եւ հաղորդ դառնալու Ձեր զօրեղ հաւատքին, Ձեր եկեղեցասէր ու հայրենասէր ոգուն, որի արտայայտութիւնը Ձեր ազնիւ յանձառութիւններն են մեր Սուրբ Եկեղեցու կեանքում: Ծառայասէր ոգով զօրացեալ՝ Դուք տարիներ շարունակ աջակցութիւն էք բերում ԱՄՆ հայոց Արեւելեան թմի Սուրբ Մարիամ Աստուածածին եկեղեցուն, որպէսզի այն միշտ լինի շէն ու պայծառ եւ շարունակի ծառայել բարեպաշտ մեր ժողովրդին՝ հայորդեաց հոգիները սնելով Աստուծոյ կենարար Խօսքով եւ հոգեւոր ու ազգային մեր արժէքներով: Նոյն նախանձախնդրութեամբ, ի սէր եւ յարգանք Ձեր բարեպաշտ ծնողաց, Դուք իրականացնում էք եկեղեցուն կից սրահի կառուցման հովանաւորութիւնը, որը առաւել լայն հնարաւորութիւններ պիտի ընձեռնի ազգօգուտ ու եկեղեցաշէն ծրագրերի իրականացման համար՝ ի նպաստ համայնքային կեանքի շինութեան եւ բարօրութեան ազգիս հայոց:

Հարազատ ժողովրդի, Հայրենի մեր Երկրի եւ հոգեւոր մեր արժէքների հանդէպ Ձեր սէրն ու նուիրումը Դուք արտայայտեցիք նաեւ Հայաստանում ստանձնած յանձնառութիւններով՝ Բարձրեալի օրհնութեամբ հարստացնելով Ձեր ազգաշէն ծառայութեան վաստակը: Ահաւասիկ, այսօր մեծաւ խնդութեամբ կատարում ենք Էջմիածնի Հայորդեաց տան վերաբացման արարողութիւնը, որն ամբողջովին վերանորոգուել ու բարեզարդուել է Ձեր ազնիւ հովանաւորութեամբ՝ իր դռները բացելով հայրենաբնակ Մեր զաւակների առջեւ: Գոհունակութիւն է Մեզ համար, քանզի այս նուիրական յարկի ներքոյ կրթութիւն ստացող մատաղ հայորդեաց հոգիներում պիտի սերմանուի եկեղեցասիրութեան, ազգասիրութեան ու հայրենասիրութեան բարի հունդեր՝ միշտ փարուած մնալու հայրենական մեր սրբութիւններին՝ իբրեւ արժանի զաւակները Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ Հայրենի մեր Երկրի:

Նրանք նաեւ պիտի ներշնչուեն Ձեր բարի գործերով, Ձեր ազգասէր, հայրենասէր ու եկեղեցասէր ոգով՝ մշտապէս երախտագիտութեան ազնիւ զգացում տածելով Ձեր հանդէպ ու աղօթելով Թուֆայեան բարեպաշտ ընտանիքի համար:

Ձեր հաւատաւոր ու ազգասէր ոգու եւ ազգային-եկեղեցական մեր կեանքում Ձեր մեծ վաստակի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ Մեր աղօթքն ենք բարձրացնում առ Ամենազօրն Աստուած՝ հայցելով, որ Տէրը Ձեր կեանքը օրհնի երկնատուր բարիքներով եւ գործոց յարանորոգ յաջողութիւններով՝ Իր Ամենախնամ Աջի ներքոյ պահպանելով Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին:

Թող Բարձրեալ Տէրը զօրացնի համայն մեր ժողովրդի եկեղեցասիրութեան եւ հայրենանուիրումի ոգին՝ Իր հանապազ հովանու ներքոյ առաջնորդելով մեծարժան գործերի:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 31-ն Օգոստոսի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 420